



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>

Էլ. փոստ՝ info@armin.am

Ա. Կ. ՋԻՎԵԼԵԳՈՎ

Հայաստանի հանրապետության գիտությունների ակադեմիայի
թղթակից անդամ դոկտոր, պրոֆեսոր

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ԹՈՒՐԿԻԱՆ

1946 թ. փետրվարի 20-ին Մոսկվայում կարդացած պեկուցման
սղագրությունը

Երկրորդ հրատարակություն

«ԳԻՏԵԼԻՔ»

Ե Ր Ե Վ Ա Ն — 1991

Առաջաբան՝ Հ. Տ. ՂԱՆԱԼԱՆՅԱՆ

ISBN 5-5-8079-0131-2

Ալեքսեյ Կարապետի Ջիվելեգովի, այդ վառ հայրենասերի և մեծ գիտնականի անունը լավ հայտնի է ոչ՝ միայն մեր երկրում, այլ նաև արտասահմանում: Պրոֆեսոր Ջիվելեգովը խորագիտակ մարդ էր, տիրիպետում էր բազմաթիվ հին ու նոր լեզուների: Նրան բարձր են գնահատել Օրբելին, Գորկին, Լունաչարսկին, Տառլեն, Մյասնիկյանն ու Մ. Սարյանը: Պրոֆեսոր Ջիվելեգովի գործունեության առաջին շրջանի գիտական արժեք ներկայացնող աշխատություններից են «Գուղացիական շարժումները Արևմուտքում», «Ֆրանսիական մեծ հեղափոխության բանակը և նրա առաջնորդները», «Միջին դարերի քաղաքային համայնքները» և ուրիշները: Հետագա տարիներին պրոֆեսոր Ջիվելեգովը սկսում է կրթական արվեստի ու գրականության հարցերով: Գիտական մեծ արժեք են ներկայացնում նրա այնպիսի աշխատությունները, որպիսիք են «Լեոնարդո դա Վինչի», «Դանթե Ալիգիերի»-ն: Այս ուսումնասիրությունները բարձր են գնահատել նաև արտասահմանում, իրենք՝ դանթեագետները: Ջիվելեգովը լինելով վառ հայրենասեր, մեծապես հետաքրքրվում էր նաև մայր հայրենիքին վերաբերող հարցերով: Երբ ես լինում էի Մոսկվայում, նա ամեն անգամ սրտի ցավով հարցնում էր ինձ Սևանի ճակատագրի մասին:

--Ասացեք խնդրեմ, մի՞թե վերջնականապես պիտի ցամաքի մեր լեռնային լուսե այդ լիճը,-ասում էր ու սրտի թափ ոռանջով ավելացնում, — ափսոս, հապար ափսոս: Միայն հայրենիքից հեռու գտնված մարդը խորապես կարող է պզալ, թե ինչպիսի ուժով է քաջում նրան հայրենի հողի խորհուրդը:

Արդեն անուն հանած գիտնական էր Ջիվելեգովը, երբ 1916 թվականից սկսած բուռն գործունեություն ծավալեց Մոսկվա-

յում հրատարակվող «Армянский Вестник» հանդեսի էջերում: Շուտով նա դառնում է այդ հանդեսի խմբագիրը: Իր մի շարք հրատարակատեսակային վառվորուն հողվածներում նա կոչ էր անում ռուս առաջավոր մտավորականությանը, դատապարտել հայկական ցեղասպանությունը: Ա. Կ. Ջիվելեգովի կոչով «Армянский Вестник»-ի շուրջն են համախմբվում նաև ռուս այնպիսի հայասեր հումանիստ գրողներ, պոետներ, որպիսիք էին՝ Վ. Բրյուսովն ու Ս. Գորոդեցկին, Վ. Նեմիրովիչ-Պանչենկոն ու Յու. Վենետկովսկին և շատ ուրիշներ: Հայկական արդար դատի այդ երդվյալ պաշտպանները լսելի էին դարձնում իրենց ձայնը, ռուս մտավորականներին, կոչ անում պորավիզ կանգնելու մեր դատին:

Գալով պրոֆեսոր Ջիվելեգովի խնդրո առարկա «Հայաստանը և Թուրքիան» աշխատությանը, պետք է նկատել հետևյալը: 1946 թվականին Մոսկվայում էր, որ Ջիվելեգովը հրատարակեց եկավ մի դուստրոստությամբ «Հայաստանը և Թուրքիան» թեմայով, որը լույս տեսավ առանձին գրքուկով և երկու երեք օրվա ընթացքում սպառվեց «հոգիացավ ու շոգիացավ» գրախանութներից: Մի ժամանակաշրջան էր դա, երբ բարենպաստ պայմաններ էին ստեղծվել առաջ քաշելու Թուրքիայի պալթած հայկական հողերի վերադարձման հարցերը:

Ջիվելեգովի այս գրքուկը սկսվում է պատմական սեղմ ակնարկով, ուր կենդանի ոճով շարադրված է ողջ հայոց պատմությունը, սկսած Արտաշես Առաջինի թագավորության շրջանից, Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքներից, Տիգրան Մեծի թագավորության, տառերի գյուտի, Բագրատունիների թագավորության շրջանից, Արաբական արշավանքներից ընդհուպ մինչև 1876-77 թվականների ռուս-թուրքական պատերազմը, Հայկական հարցի պատմությունը, ապա նաև 1915 թվի երիտ-թուրքերի կազմակերպած ցեղասպանության ժամանակաշրջանի անցքեղի նկարագրության պատմությունը:

Գալով Բրեստ-Լիտովսկու 1918 թվականի և 20 թվականի նոյեմբերի 22-ի Սևրի պայմանագրին, Ջիվելեգովը գրում է. «Վիստոնը կայացրեց իր միջնորդական որոշումը: Հայաստանին պիտի վերադարձնել Վանի, Բիթլիսի, Էրզրումի և Տրապիզոնի վիլայեթները: Տրապիստաբար Սևրի պայմանագրի որոշումը նույնքան փխրուն դուրս եկավ, որքան Սևրի ձեռնպակիները, քանի որ այդպես էլ չկենսագործվեց այն: Գրքուկի հաջորդ էջում կան այսպիսի տողեր. «Միջապային այն բարդ իրադրության մեջ, որ գոյություն ուներ 1920-21 թվականներին, խորհրդային երկ-

րի պետական շահերը հրամայաբար պահանջում էին հաշտություն: Թուրքիայի հետ... Այդ ամենի հետևանքով 1921 թվականի մարտի 16-ին Մոսկվայում ստորագրված Խորհրդա-թուրքական պայմանագիրը վավերագրում էր անգամ Կարսի և Արդահանի մարզերի, ինչպես նաև Երեվանի նահանգի Սուրմալու գավառի պիջումը Թուրքիային»:

Այս տողերը գրող ուսուցչապետ Ջիվելեգովը, իհարկե, գիտեր և այն մասին, թե ինչպիսի ընդհատակյա հոսանքներ գոյություն ունեին, երբ որոշվում էր հայկական հողերի հարցը:

Ջիվելեգովը լավ գիտեր նաև այն, թե ինչպես Ստալինի «բարի կամքով» ու առատաձեռնությամբ թուրքերին էին տրվում հայկական հողերը: Ում-ում, Ջիվելեգովին լավ հայտնի էր և այն փաստը, որ թուրքերի պահանջով թույլ չտրվեց հայկական պատվիրակությանը մինչև իսկ մասնակցելու այդ բանակցություններին, ուր որոշվում էր հայկական հողերի հարցը: Ջիվելեգովը չէր կարող իրապեկ չլինել, թե ինչպես Ստալինը խլացնում էր Չիչերինի ձայնը, երբ խոսքը վերաբերում էր հայկական հողերի արդար լուծմանը: Վերջապես, պրոֆեսոր Ջիվելեգովը քաջամանոթ էր և հայապատկան Արցախն ու Նախիջևանը Ադրբեջանին շնորհելու հարցի պատմության հետ:

Հրապարակայնության անթույլատրելիության պայմաններում ո՛չ միայն գրել, այլև խոսելն այդ մասին, արգելված էր, ուստի և «Հայաստանը և Թուրքիան» գրքուկի հեղինակ, մեծավաստակ գիտնականը ակամա լսել է այդ ամենի մասին գրել:

«Աշխարհի բոլոր ծայրերից, որտեղ հայկական համայնքներ կան, Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր ասամբլեայի անունով, ԽՍՀՄ Միության կառավարության և Հայկական ԽՍՀ կառավարության անունով անընդհատ դիմումներ են ստացվում, որոնցում հույս է հայտնվում, որ Հայկական Խորհրդային Հանրապետության դրոշի ներքո վերջապես կվերամիավորվեն վաղեմի հայկական հողերը»:

Բայց, ավա՛ղ, իրադարձությունները շուտով այլ ընթացք ըստացան, և ԽՍՀՄ արտաքին գործերի այն ժամանակվա նախարար Մոլոտովը, հաշվի չնստելով հայ ժողովրդի կամքի և իրավունքի հետ, հայտարարեց, թե մենք պահանջ չունենք թուրքերից:

Եվ այսպես, մեծ տերությունների խղճի վրա է ծանրանում հայ ժողովրդի ոտնահարված իրավունքները չպաշտպանելու

մեղքը, ժողովուրդ, որն արվեստի, պոեզիայի և գիտության գույսագործոցներ է տվել աշխարհին:

Ինչպես Ջիվելեգովը, այնպես էլ Բոյուտովը, Գորկին և շատ ուրիշներ մեկ անգամ չէ, որ անարգանքի սյունին են գամել «մինչև ականջները ցեխի և արյան մեջ խեղդվող ոճրագործ թուրքերին»:

Ինչքան էլ որ թե՛ այստեղի և թե՛ այնտեղի թուրք պատմաբանները իրենց գրոտած ստահող հողվածներում հակառակը պնդեն, միևնույնն է՝ «Մախաթը պարկի մեջ չի պարտակվում»: Մինչև իսկ ինքը՝ Մուստաֆա Քեմալն էլ մի անգամ ականայից խոստովանել է ահա թե ինչ. «Մեր ցեղակիցները գործել են անասելի հանցագործություններ... Նրանք հայերին այնպիսի դրության մեջ էին գցել, որպիսին չի տեսել ո՛չ մի ժողովուրդ պատմության մեջ»: Թող որ շարունակեն կաշվից դուրս գալ թուրք պատմաբանները, նենգափոխել փաստերը, անօգուտ է:

Դատ ու դատաստան կա դահիճների համար, և մի օր նրանք կկանգնեն պատմության ահեղ դատաստանի առաջ:

Հ. Ղանալանյան

✎ արցը, որին նվիրվում է սույն դասախոսությունը, բնավ էլ գուտ տեսական չէ: Խոսքը աշխարհի հնագույն քաղաքակիրթ ժողովուրդներից մեկի պատմական ճակատագրի մասին է: Հայերն իրենց պատմությունն սկսել են ասորեստանցիների հետ միաժամանակ, իրենց պատմական ճանապարհին առնչվել մարերի, հին պարսիկների, լյուդիացիների, պոնտացիների և առաջավոր Ասիայի մյուս ժողովուրդների հետ, և այն ժամանակ, երբ այդ ժողովուրդներից շատերը անհետացել են, հայ ժողովուրդն ապրում է: Հայկական պետականությունը դժվարին, բայց արդյունավետ շինարարական ժամանակաշրջանից հետո թևակոխել է իր նորագույն պատմության երկրորդ 25-ամյակը:

Ինչքան հայտնի է, սփյուռքահայ հասարակությունը վերջին ժամանակներս բուռն կերպով քննարկում է Թուրքիայի վավթած Կարսի, Արդահանի հայկական մարզերը և մի քանի այլ տարածքներ վերադարձնելու հարցը: Աշխարհի բոլոր երկրների հայկական տարբեր կազմակերպությունների բազմաթիվ կոչերը, հուշագրերն ու հռչակագրերը հետևողականորեն արծարծում են թուրքերի խլած հայկական հողերը և սորհրդային Հայաստանի հետ վերամիավորելու՝ հայ ժողովրդի համար կենսականորեն կարևոր հարցը:

Ներկայումս Թուրքիայի կազմի մեջ մտնող հայկական նահանգները «իրենց միակ օրինական ներկայացուցիչներին՝ Խորհրդային Հայաստանին»¹ վերադարձնելու կոչով երեք մեծ պետությունների ղեկավարներին է դիմել Ամերիկայի Հայոց ազգային խորհուրդը, համանման կոչերով հանդես են եկել Եգիպտոսի, Լիբանանի, Սիրիայի, Իրանի հայկական ազգային խորհուրդները, Ֆրանսիայի, Բուլղարիայի, Ռումինիայի և այլ երկրների հայկական գաղութները: Հայ ժողովրդի վաղնջական հողերը նրան վերադարձնելու և պատմական անարդարությունն ուղղելու պահանջով հանդես է գալիս նաև Խորհրդային Հայաստանի հասարակայնությունը:

Իսկ հայերն ինչու՞ գրկվեցին հայրենի հողից: Ի՞նչը նրանց սփռեց աշխարհով մեկ: Ինչպիսի՞ն է նրանց պատմական ճակատագիրը:

¹ Կիրակոսյան Ջ. Ս. «Առաջին համաշխարհային պատերազմը և Արևմտահայաստանը», «Հայաստան», 1987 թ.:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Հայերի ամենավաղ քաղաքական միավորումները գոյացել են դեռևս մեր թվարկությունից առաջ IV դարում: Մեր թվարկության II դարի շենին հայերն ստեղծել էին իրենց ընդարձակ միացյալ պետությունը՝ Արտաշես I-ի Հայկական թագավորությունը:

Առաջավոր Ասիան վաղուց էր դարձել միջանցիկ ճանապարհ Ասիայից դեպի Եվրոպա ժողովուրդների մեծ գաղթերի համար, տրորված արահետ էր արևելյան նվաճողների համար: Բնավորվել այդ մարզերում և անձեռնմխելի պահել իր ազգային գոյությունը, սա ամենամեծ «հրաշքներից» մեկն է, որ գիտի պատմությունը: Հայ ժողովրդին հաջողվել է իրականացնել այդ հրաշքը:

Դարերի ընթացքում Հայաստանը մտել է Առաջավոր Ասիայի մեծ միապետությունների կազմի մեջ: Ասորեստանի տիրապետությունը թոթափելու համար, որը ճնշում էր իրենց ազատ պարգացումը, հայերը միավորվեցին մարերի հետ: Երբ մեր թվարկությունից առաջ VI դարում սկսեց բարձրանալ պարսից թագավորությունը, հայ տիրակալները նրանց հետ հանդես եկան պառնամած մարական պետության դեմ: Հայկական ավստո-դավրոյցները պատմում են Աբեմենյանների հին պարսկական թագավորության հիմնադիր Կյուրոս Ավագի հետ հայ թագավորների բարեկամության մասին:

Կյուրոսի որդու՝ Կամյուսեսի և Դարեհ I Վշտասայանի ժամանակների մեծ խիպախումներից հետո սկսվեց Աբեմենյանների տերության անկումը: Պատմական ասպարեկում երևացին հեղինակները, որոնք մեր թվարկությունից առաջ V դարում մեկը մյուսի հետևից կասեցրին Եվրոպայի վրա պարսից հարձակման փորձերը: Տրապիսիոսի միջոցով առևտրական կապերի շնորհիվ հայերը հանդիպում էին աթենացիների և փոքրասիական գաղութարարների հետ, ծանոթանում հելլենական մշակույթին: Մեր թվարկությունից առաջ 328 թվականին Հայաստանը նվաճվեց Ալեքսանդր Մակեդոնացու կողմից: Ալեքսանդրի տերության տրոհվելուց հետո Հայաստանը որպես կախյալ երկիր մտավ Սելևկյանների պետության մեջ: Նա արագորեն յուրացրեց հունական մշակույթը: Մեր թվարկությունից առաջ II դարի սկզբներին Մեծ Հայքը ապստամբեց Սելևկյանների դեմ և ապստամբվեց նրանց իշխանությունից: Հենց այդ ժամանակ էլ Արտաշես Կորավարը հիմնադրեց հայոց թագավորությունը և դարձավ նրա արքան:

Հայոց հին թագավորության պատմության ամենափայլուն,

թեպետև ոչ երկարատև ժամանակաշրջանը, նրա առավելագույն հպորության և ներքին բարգավաճման ժամանակաշրջանը, կապված է Արտաշեսյան Տիգրան II-ի կառավարման հետ (I դար մեր թվարկությունից առաջ), որն ընդունել էր «արքայից արքա») տիրողուը, որը մինչ այդ պատկանում էր Պարթև թագավորներին:

Տիգրան Մեծի Հայաստանը, որը միավորել էր Փոքր Ասիայի ընդարձակ տարածքներ՝ մինչև Միջերկրական ծովի արևելյան ափերը (Շոփք, Ասորիք, Կիլիկիա և այլն), մշակութային մեծ ուժ էր առաջավոր Ասիայում: Տիգրան II-ի նվաճումները Հայաստանը դարձրին այն ժամանակվա աշխարհի խոշորագույն տերություններից մեկը: Տիգրանի և նրա դաշնակցի՝ Պոնտոսի Միհրդատ IV Եվպատոր թագավորի ծավալապաշտ մտադրությունները, որը փորձում էր իր շուրջը միավորել հելլենիստական փոքր պետությունները, տագնապի մատնեցին և հարուցեցին Հռոմի հակադեցությունը: Նրա լեգեոնների հարվածներ իներքո ընկավ Պոնտոսի թագավորությունը: Դաշնակցից Պարթևստանի աջակցությունը վայելող Հայաստանը Տիգրանի ժառանգների օրոք դիմացավ, բայց արդեն որպես Հռոմից կախյալ պետություն: Հռոմի թուլացումով Հայաստանն ընկավ պարթևական թագավորության տիրապետության տակ:

Իրենց մշակույթը հարստացնելով հելլենական ու հռոմեական առաջավոր մշակույթի տարրերով, հայեր ըմբռնել էլ առիջնորդվել են ազգային ինքնապահպանության ձգտումով: Հայ ժողովրդի այդ նույն առանձնահատկությունները դրսևորեցին նաև այն ժամանակ, երբ Հայաստանն ընդունեց քրիստոնեության (մեր թվարկության 301 թվականին):

Այն փութաջանությունը, որով հայոց եկեղեցու հիմնադիր և առաջին եպիսկոպոս Գրիգոր Լուսավորիչն ու նրա համախոհները ոչնչացնում էին այն ամենը, ինչ հիշեցնում էր հեթանոսական ժամանակները, վտանգ կար, որ քրիստոնեությունը կհանգեցնի խլամանը ազգային ավանդույթներից ու մրջակույթից: Բայց դա տեղի չունեցավ: Ընդունելով քրիստոնեություն, Հայաստանը քրիստոնեական դավանանքի դոգմատիկ մշակման դարաշրջնում ընթացավ իր ճանապարհով և չըճանաչեց Քարկեդոնի տիեզերական ժողովի որոշումները: Այդ ժամանակվանից ի վեր հայ եկեղեցին ձեռք է բերում յուրօրինակ ազգային բնույթ, որն անդրադառնում է նրա ամբողջ կրոնա-հասարակական ու քաղաքական գործունեության վրա:

Շարունակելով կախման մեջ լինել մերթ Բյուզանդիայից, մերթ Սասանյան Պարսկաստանից, որտեղ նոր գահատոհմի երևան գալը (մեր թվարկության III դար) վերացրեց պարթևնե-

րի տիրապետությունը, Հայաստանը մինևույն ժամանակ հա-
ջողությամբ պահպանում էր իր ներքին կյանքի ազատ գար-
զացումը օտարերկրյա ազդեցություններից: Մեր թվարկության
ստորագրող IV դարից Հայաստանում սկսվեցին ավատա-
տիրական կարգեր հաստատվել: Հայ ավատատերերը՝ նա-
խարարները, ինքնուրույն կառավարիչներ էին իրենց հողե-
րում և հաճախ գործում էին Հայաստանի անկախության շա-
հերի դեմ: Նախարարների երկպառակություններից օգտվում
էին հարևանները:

V դարում Հայաստանը ժամանակավորապես կորցրեց իր
ինքնուրույնությունը, նրա մի մասը վավթեց Պարսկաստանը,
մյուսն անցավ Բյուզանդիային: Բայց անընկճելի ազատատենչ
ոգին այս անգամ էլ չլքեց հայերին: Նրանք կրկին ու կրկին
պայքարի էին ելնում ընդդեմ նվաճողների բռնակալության և
սրով պաշտպանում իրենց սպառնալից գոյությունը, մշա-
կույթը: Ժողովուրդը իր պորավար Վարդան Մամիկոնյանի
առաջնորդությամբ անմահ սխրանք կատարեց Ավարայրի ճա-
կատամարտում 451 թվականին, երբ ի բ դերն էլավ հայերին
բռնությամբ ձուլելու պատիկների հուսահատ փորձը:

V դարում, որը համարվում է Հայաստանի ոսկեդարը, ժո-
ղովրդի հոգևոր կյանքը հասավ իր ծաղկմանը. երևան եկան
վաղ շրջանի մեծ գրողները՝ հայ պատմագրության քերթողա-
հայր Մովսես Խորենացին, պատմիչներ Եղիշեն, Ղապար Փար-
պեցին, փիլիսոփա Եսնիկը, հայկական ինքնատիպ այբուբենի՝
ստեղծող Մեսրոպ Մաշտոցը և ուրիշներ, ծաղկում էին թատ-
րոնն ու մյուս արվեստները:

Հայաստանը մեկն էր այն առաջին երկրներից, որոնք ի-
րենց վրա ընդունեցին արաբ նվաճողների հարվածները: Արա-
բական լծի դեմ հայերի ժողովրդական շարժումը իր արտա-
ցումն է գտել հայ ժողովրդի անմահ ստեղծագործության՝
«Սասունցի Դավիթ» դյուցազներգության մեջ, որը բանաստեղ-
ծական ձևով պատմում է օտար նվաճողների դեմ հայ գեղ-
ջուկների՝ «ռամիկների» մղած հերոսական պայքարի մասին:

Արաբական պետության շրջանում (VII-IX դարեր)
պայտորեն աճեցին Հայաստանի առևտրական քաղաքները:
Արաբական խալիֆայության տրոհումից (IX դարի վերջ) հետո
գոյացան մի քանի հայկական թագավորություններ, որոնցից
առանձնակի նշանակություն ձեռք բերեց Բագրատունյաց թա-

1. Հայկական գրեր գոյություն են ունեցել դեռևս մեր թվարկությու-
նից առաջ:

գավորությունը Անի մայրաքաղաքով: Այդ թագավորությունը
Բյուզանդիայի համար առաջապահ պատվար հանդիսացավ
թուրք սելջուկների ասպատակության շրջանում: Հարյուրամ-
յակները շարունակ նա կատաղի պայքար էր մղում նրանց դեմ:
1080 թվականին նոր հայկական թագավորություն հիմնադրվեց
Կիլիկիայում: Կիլիկյան Հայաստանը ավատատիրական պետու-
թյուն էր, որտեղ սպառնալից հին ավանդույթները միաձուլվում
էին եվրոպականի հետ:

Խաչակրաց արշավանքների ժամանակաշրջանը Հայաս-
տանի հարավի և հյուսիսի քաղաքների աճի ժամանակներ
էին: Բայց այն ժամանակ, երբ հարավում քաղաքները գրա-
վում էին նույն համեստ տեղը, ինչ որ նրանց հատկացվում էր
ավատատիրական մշակույթի կողմից Եվրոպայում, Անիում
սաղմնավորվել և հաջողությամբ էր պարգանում հայ բուր-
ժուսական: Բագրատունյաց Անիի հայկական թագավորության
բարգավաճման դարաշրջանը Հայաստանի պատմության առա-
վել փայլուն էջերից մեկն է:

Արհեստների և առևտրի արագ աճը, պետական իշխանու-
թյան ամրապնդումը պայմանավորեցին հայ մշակույթի նոր վե-
րելքը: Վեհակերտ տաճարների ու պալատների ավերակները,
քանդակագործության և որմնանկարչության փրկված նմուշ-
ները վկայում են շնորհաշատ և աշխատասեր հայ ժողովրդի
ստեղծագործական մեծ ոգեշնչվածության, վարպետության ու
ստառանդի մասին:

Մոնղոլների ասպատակությունը վերջ տվեց Անիի թագա-
վորությանը՝ հայերի վերջին ինքնուրույն պետությանը, նրանց
ազգային մշակույթի վերջին պատվարի գոյությանը: Անին,
ինչպես մյուս քաղաքները, ավերվեց: Ավերածությունը լը-
րագրեց Լենկթեմուրի ասպատակությունը (1386 թվական):
1375 թվականին եգիպտացի մամլուքների հարվածներից ըն-
կավ նաև Կիլիկիայի հայկական նոր թագավորությունը: Նվա-
ճողները կոտորեցին այն ժամանակվա հայ հասարակության
առավել քաղաքակիրթ մասին, բայց հայ ժողովրդի միջուկին՝
հայ գյուղացիությանը ոչնչացնել նրանց չհաջողվեց:

Երբ իրենց հերթին ընկան Լենկթեմուրի տերությունն ու
մամլուքների տիրապետությունը, Հայաստանն ի վերջո բա-
ժանվեց Թուրքիայի և Պարսկաստանի միջև: Դա տեղի ունե-
ցավ 1520 թվականին, երբ օսմանցիների Սելիմ I սուլթանը
պարսիկներից խլեց ամբողջ Փոքր Հայքը և Մեծ Հայքի մեծ
մասը: Բայց նույնիսկ իսլամի լծի ներքո, մուսուլմանական մո-
լեռանդության փոթորկահույզ ալիքների մեջ, ցրկվելով ազգա-

ինն իրավունքներից ու առավել բարեկիրթ դասերից, մնալով առանց քաղաքական ղեկավարության, հայ ժողովուրդը չկործանվեց, ինչպես ուրիշ շատ պարտված ժողովուրդներ:

Վաղ հնադարում պատմական ասպարեզ ելնելով «սրերի շառաչի ներքո», հայ ժողովուրդը համառ տքնանքով և արիական պայքարով կարողացավ պահպանել իր ազգային գոյությունը և իր ազգային մշակույթը: Հանուն դրանց՝ նա մեկ անգամ չէ, որ անմահ սխրանք է կատարել: Տիգրան Մեծի առաջնորդությամբ ջախջախել է Լուկուլոսի հռոմեական անպարտելի լեգեոնները, Վարդան Մամիկոնյանի գլխավորությամբ Ավարայրի դաշտում ջախջախիչ հարված հասցրեց պարսից Հավկերտ արքայի մեծաքանակ զորքերին, պայքարել է արաբական տիրապետության դեմ և հարվածել արյունարբու Յուսուֆի գլխավորած արաբական հորդաններին, իրեն փառքով է պսակել XVIII դարի 20-ական թվականներին թուրքական և պարսից լծի դեմ մղած ազգային ապստամբական շարժման ժամանակ, որը գլխավորում էր պորավար Դավիթ Բեկը:

Ապատատենչ ոգին և ազգային բարձր գիտակցությունը հայ ժողովրդին թույլ տվեցին պաշտպանել ու պահպանել իր ազգությունը, իր լեզուն ու սովոույթները, պատմության բոլոր փորձությունների միջով առաջ տանել իր բավադարյան հոգևոր ու նյութական մշակույթը: Որոշակի դեր է խաղացել նաև հայ եկեղեցին, որը պաշտպանել է իր հավատքն ու օգնել պահպանելու հայ գրչությունը: Հայ ժողովրդի մշակութային բուռն ծաղկման վկաներն են մինչև մեր օրերը ձեռագրերը, հայ ճարտարապետության բզմաթիվ հուվանքերում պահպանված 20 հազարից ավելի հին հայ-շարձանները՝ Գառնիի տաճարը (մեր թվարկությունից առաջ I դար), Չվարթնոցի, Հոփսիսիմեի, Գայանեի (VII դար), Ախթամարի (X դար), Փրկչի, Սանահինի, Հաղպատի, Գեղարդի (XII դար) և շատ այլ տաճարներ: Նույնպիսի վկաներ են Հայաստանի հին քաղաքների ու մայրաքաղաքների՝ Տիգրանակերտի, Արտաշատի, Անիի, Դվինի և շատ ուրիշների ավերակները:

Ցավոք, հայկական արվեստի մյուս ստեղծագործություններից շատ քիչ բան է հասել մինչև մեր օրերը: Հին հայկական գեղանկարչության մասին որոշ պատկերացում են տալիս միայն որմնանկարների հատվածներն ու հիանալի հին ձեռագրերը: Ինչ վերաբերում է թատերական արվեստին, ապա մեկուկես

տարի հետո՝ Հայաստանը կառնի իր թատրոնի 2000-ամյա հոբելյանը: Երկու հազար տարի առաջ Արտաշատում Արտավազդ արքայի պալատին կից ներկայացում է տրվել, որի հուշը մեզ համար պահպանել է Պյուտարքոսը. բեմադրվել էր Էվրիպիդեսի «Բաքոսուհիներ» ողբերգությունը:

XVI դարի շեմին Հայաստանում սկսում է սկզբնավորվել, ծագել նոր բուրժուազիա, գլխավորապես՝ առևտրական: Սկսվում են ճանապարհորդություններ ու վերաբնակեցումներ դեպի Կոստանդնուպոլիս ու ծովից այն կողմ: Հայկական բնակավայրեր են հայտնվում Եգիպտոսում, Հնդկաստանում, Կոստանդնուպոլսում, կովկասյան քաղաքներում: Հայ վաճառականները հիմնում են ազգային դպրոցներ, տարածում կրթություն: Նրանք գրքի մարդկանց ու հոգևորականությանը միջոցներ էին տալիս իրենց լուսավորական գործունեության համար: Հայերի շրջանում մշակութային շարժումը առանձնապես ուժեղանում է XVIII դարում: Հնդկաստանում ստեղծվում է հայկական առաջին պարբերական հրատարակությունը: Վենետիկի հայ միաբնությունում վանականները գրում էին Հայաստանի աշխարհագրությունը, պատմությունը, գրականությանը նվիրված իրենց աշխատությունները, որոնք իրենց նըշանակությունը պահպանել են մինչև մեր օրերը: Կամաց-կամաց սկսում է սկզբնավորվել հայ նոր գեղարվեստական գրականությունը:

Ասպես է սկսվել հայ մշակույթի վերածնունդը: Հետագայում հոգևորական գիտնականները աստիճանաբար հետ են մղվում աշխարհիկ շրջանակների ներկայացուցիչներից: Եվ XVIII դարի վերջերին երևան է գալիս ազգային մտավորականության այնպիսի փայլուն ներկայացուցիչների մի համաստեղություն, ինչպիսիք էին դեմոկրատ լուսավորիչներ Շահամիր Շահամիրյանը, Հովսեփ Էմինը, Իսրայել Օրին և ուրիշներ:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ԹՈՒՐԻՔԻԱՆ XIX ԴԱՐՈՒՍ

XVIII դարի վերջում սկսվեց Թուրքիայից հայերի տարագրությունը Ռուսաստան լայն չափերով: Հայերը սկսեցին հաղորդակցվել ռուսական մշակույթին: XIX դարի ռուս-թուրքական և ռուս-պարսկական պատերազմների հետևանքով հին Հայաստանի տարածքի մի զգալի մասը հայտնվեց Ռուսաստանի սահմաններում, և ուժեղացավ հայերի շփումը ռուսական մշակույթի հետ: Ռուսահայոց գրականությունը, հավատարիմ

1. Նկատի է առնվել 1947 թվականը:

մնալով ազգային ավանդույթներին, ոգեշնչվում էր ռուսական գեղարվեստական գրականության դասական նմուշներով: Խաչատուր Աբովյանը և նրա հետևորդները ստեղծեցին նոր հայ գրականություն՝ ժողովրդական խոսակցական լեզվի հիմքի վրա: Ռուսաստանում Միքայել Նալբանդյանը պայքարում էր ցարիզմի դեմ՝ ձեռք-ձեռքի տված ռուս մեծ դե սոկրատ հրապարակախոս Ն. Գ. Չեռնիշևսկու հետ: Ռուսաստանում հայ ժողովրդի լավագույն ուժերը գործում էին ռուս գրականության անդաստանում, իսկ այնպիսի հայ գեներալներ, ինչ պիսիք էին Մաղաթովը, Տեր-Ղուկասովը, Լազարյանները և օլունները, դեպի հաղթանակներ էին առաջնորդում ռուսական զևդերը:

Մինևույն ժամանակ միանգամայն ողբերգականորեն դասավորվեց Թուրքիայում մնացած հայերի ճակատագիրը:

Քանի դեռ օսմանյան կայսրության քաղաքական վիճակը կայուն էր, երկրի քրիստոնյա բնակչությունը առանձնապես հալածանքների չէր ենթարկվում: Իսկ երբ Թուրքիան սկսեց կորցնել իր ռազմական ու քաղաքական վարկը, հայերի վիճակը սկսեց կտրուկ վատթարանալ, ուժեղացան կեղեքումները, հաճախակի դարձան ջարդերը: Կայսրությունից անպատվորեն անջատվում էին ուրիշ ժողովուրդներից նախկնում թուրքերի պալած տարածքները: Ղրիմը, Նովոռոսիան, Տրանսիլվանիան կորսվեցին XVIII դարում, Սեբասիան, Հունաստանը, Դանուբյան իշխանությունը՝ XIX դարի սկզբներին և կեսերին: Արյունալից «հնազանդեցում» ու ջարդեր տեղացին բազմա չարչար թուրքահայերի գլխին հատկապես 1877-1878 թվականների ռուս-թուրքական պատերազմից հետո:

Սան Ստեֆանոյի պայմանագրով (1878 թվական), որով վերջ տվեց այդ պատերազմին, Թուրքիան Ռուսաստանի հանդեպ պարտավորվեց բարենորոգումներ անցկացնել Հայաստանում: Այնուհետև Բեռլինի դաշնագրով միջազգային հովանավորություն հաստատվեց թուրքահայերի նկատմամբ Բեռլինի վեհաժողովի մասնակից տերությունների կողմից, այդպիսով սահմանափակելով Թուրքիայի գերիշխանությունը հայերի նկատմամբ:

Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածն ասում էր. «Բարձր Դուռը պարտավորվում է առանց հապաղման, տեղական պահանջմունքին համապատասխան, բարելավումներ և բարենորոգումներ իրականացնել հայաբնակ նահանգներում և ապահովել նրանց անվտանգությունը չեղքեպներից ու քրդերից:

Այդ նպատակով իր ձեռնարկած միջոցների մասին նա պարբերաբար հաղորդելու է դրանց իրագործմանը հետևող տերություններին»:

Սակայն ոչ մի նման բան չարվեց: Ընդհակառակն, Աբդուլ Համիդ II սուլթանը միանգամայն այլ բնույթի միջոցառումներ ձեռնարկեց: Հայկական տարծքում ստեղծվեց անկանոն հետևապոր՝ «համիդիե», որն ամբողջովին ընտրված էր քրդերից և օգտագործվում էր հայերի դեմ: Հայերից բռնությամբ խլում էին հողերը և դրանց վրա բնակեցնում քրդերին: Այդպես շարունակվեց մինչև 1894 թվականը, երբ առաջին անգամ ապստամբեց Սասունը՝ Վանա լճից արևմուտք ընկած լեռնային մարզը: Այդ մի բուռ վճռական մարդկանց ապստամբությունը թաքուն ճնշելու փորձը ոչ մի բանի չհանգեցրեց: Հայոց լեռներում բռնկված պայքարի թնդյունը հասավ Եվրոպա: 1895 թվականի մարտին այն տերությունները, որոնք ստորագրել էին Բեռլինի դաշնագիրը, հուշագիր ներկայացրին սուլթանին, որով պահանջվում էր բարենորոգումներ անցկացնել: Ապրիլին սուլթանին ուղարկվեց Հայաստանում ձեռնարկվելիք բարենորոգումների հանգամանորեն մշակված նախագիծը: Սուլթանը մերժեց նախագիծը: Նույն տարվա ամռանը սուլթանի դիվանատներում մշակվեց հակաժողովրդ, որը ի չիք էր դարձնում նույնիսկ այն համեստ բարենորոգումները, որոնք նախատեսված էին տերությունների հուշագրով:

Հայերի համբերությունը հատնում էր: 1895 թվականի սեպտեմբերին Կոստանդնուպոլսի հայերը ցույց արեցին Թուրքիայի մայրաքաղաքում: Ցույցը մեծ այրուհանդեպությամբ ցրվեց կորքերի կողմից: Դրանից անմիջապես հետո ազդանշան տրվեց՝ հայերի նկատմամբ արյունալից հաշվեհարդար տեսնելու ամբողջ Փոքր Ասիայում: Ամենուրեք ջարդեր սկսվեցին: Դրանց համար պորակոչվել էին ոչ միայն քրդական հեծելապորն ու ժանդարմները, այլև կանոնավոր կորքեր: «Կամավորների» պակաս չէր զգացվում նաև ուրիշի բարիքի հաշվին անսպառիժ օգուվել ցանկացողների շրջանում: Հայերի նկատմամբ թուրքերի և հատկապես քրդերի գազանային ազգայնական մոլեռանդության դրսևորումները մշտապես բորբոքվում էին կառավարական պաշտոնյաների կողմից: 1895 թվականի

աշնան ընթացքում ամենահամեստ հաշվումներով կոտորվել էր մոտ 100 հազար հայ:

Հայ ժողովրդի համար այդ դժնակ տարում Եվրոպական դիվանագիտությունը լռում էր: Փոխարենը բազմաչարչար հայերի պաշտպանությանը հանդես եկավ Եվրոպայի առաջադիմական հասարակական կարծիքը, որը պառակալ Վիլյամ Գլադստոնի՝ բերանով բողոք ու վրդովմունք հայտնեց հայերի նրկատմամբ գործադրվող արյունոտ հաշվեհարդարների դեմ Կիլիկիայում գեթոնցիների ապստամբությանը և հայերի ինքնապաշտպանության կազմակերպումով պաշտպանված այբողոքը որոտաձայն արձագանքեց ամբողջ Եվրոպայով մեկ:

Երբ հայտնի դարձավ, որ սուլթան Համիդը չի ուզում հրաժարվել վայրենի կամայականությունից, իսկ մեծ տերություններից օգնություն հուսալը ապարդյուն է, հայերը, կանգնեցնելով իրենց ֆիզիկական բնաջնջման փաստի առաջ, անցան պինված պայքարի՝ ընդդեմ կառավարական ահաբեկչության: Ուժեղացավ ազգային պատագրական շարժումը, ի հայտ եկան հայկական ապստամբական ջոկատներ, ստեղծվում էին ինքնապաշտպանության օջախներ: Քրդերը և նույնիսկ կանոնավոր զորքերը սկսեցին հակահարված ստանալ: Նորից ապրստամբեց սասունը:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ԹՈՒՐԹԻԱՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱԵՆԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱՋՄԻ ՆԱԽՈՐԵԻՆ ՈՒ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Եվրոպական տերությունները, որոնք հայտարարում էին, թե հովանավորում են թուրքահայերին, փաստորեն անտարբեր մընացին նրանց տառապանքների հանդեպ: Հայաստանի ազգային պատագրական շարժումը սկսեց այժմ հենարան փրկուրել համաթուրքական հեղափոխական շարժման մեջ:

Եղավ մի պահ, երբ թվաց, թե դժվար չէ այլ կերպ դասավորել հայերի ու Թուրքիայի փոխհարաբերությունները: Այն եկավ 1908 թվականի երիտթուրքական հեղափոխության հետ միասին: Երիտթուրքերը՝ գործում էին բուրժուահեղափոխական ազգային՝ մակեդոնական, արաբական, հայկական (դաշնակցություն) կազմակերպությունների հետ համաձայնեցված: Յուրաքանչյուր ազգության ներկայացուցիչները խոստում էին ստացել, որ շարժման հաջողության դեպքում ազգային փոքրամասնությունների քաղաքական իղձերը կիրականացվեն:

1. Վիլյամ Գլադստոն (1809-1898)-Անգլիայի պետական Աշանավոր գործիչ, անգլիացի լիբերալների ղեկավար: 1894 թվականին հեռացել է քաղաքական գործունեությունից:

Մասնավորապես հայերին խոստացել էին՝ թույլ տալ ազատ տեղաշարժվելու հայկական վիլայեթներում (մարզերում), վերադարձնել գուղացիներից խլված հողերը, չեղյալ հայտարարել 1894-1895 թվականներին արձակված բացառիկ օրենքները, ներում շնորհել քաղաքական կալանավորներին, արտոնել վտարանդիների վերադարձը, փոխել հին վարչակարգի վարչական աշխատողներին, սանձահարել քրդերին և այլն: Այդ ամենը, ինչպես դժվար չէ տեսնել, ավելի շուտ վարչական բնույթի միջոցառումներ էին, քան քաղաքական: Դրանք մի նպատակ ունեին. հայ բնակչության համար ստեղծել գոյության փոքրիշատե տանելի պայմաններ: Բայց երիտթուրքերի քաղաքական նպատակներն այլ էին: Հայ բնակչության ջարդերն ու կոտորածը շարունակվեցին:

1910 թվականի օգոստոսի 6-ին երիտթուրքական շարժման պարագլուխներից մեկը՝ Թալեաթ բեյը, երիտթուրքական կոմիտեի (կենտրոն) Սալոնիկում կայացած նիստում, որն այն ժամանակ դեռևս պատկանում էր Թուրքիային, ծրագրային ձև առաջ: «Ըստ սահմանադրության, — ասում էր նա, — բոլոր թուրք հրատակները, ինչպես մուսուլմանները, այնպես էլ քրիստոնյաները, հավասար են օրենքի առաջ: Բայց, ինքներդ եք հասկանում, որ դա անիրագործելի է: Այդ գաղափարը նախ և առաջ հակասում է շարիաթին: Դրան հակառակվում է մեր անցյալը: Դրա դեմ բողոքում է հարյուր հազարավոր հավատազրայների պագոտմը: Ապա, և դա անչափ կարևոր է, դրան դեմ են քրիստոնյաներն իրենք, քանի որ նրանք չեն ցանկանում դառնալ օսմանցի: Թուրքիայում կարող է օրենքի առաջ հավասարության մասին խոսք լինել միայն այն դեպքում, երբ ավարտվի բնակչության բոլոր տարրերի օսմանագումը»: Երիտթուրքերը այդ ծրագրի ոգով էլ գործում էին հենց այն պահից, երբ իշխանությունն անցավ իրենց ձեռքը: Անտարակույս, այդ ծրագրի ոգով էր Ադանայի (Կիլիկիա) ահավոր շարդը 1909 թվականին, երբ սպանվեցին շուրջ 20 հազար հայեր և նույնքան էլ ստիպված էին փախչել հարապատ վայրերից: 1912 թվականի նոյեմբերին հայոց կաթողիկոսը դիմեց ռուսական կառավարությանը, խնդրելով պաշտպան կանգնել թուրքահայերին: Ռուսաստանը անասնց խնդրանքին: Բանակցություններ սկսվեցին տերությունների միջև: Թուրքիան փոր-

1. Երիտթուրքեր՝ թուրքական բուրժուահեղափոխական շարժման մասնակիցներ, որոնց նպատակն էր տապալել սուլթանական ինքնակալությունը և սահմանադրական կարգեր հաստատել Թուրքիայում:

ձեց վիժեցնել բարենորոգումների սեփական նախագիծ ներկայացնելու Ռուսաստանի նախաձեռնությունը, բայց դրանից ոչինչ չստացվեց. 1913 թվականի հունիսին նախնական նախագիծը պատրաստ էր: Այն անհանգստություն պատճառեց ոչ միայն թուրքական կառավարությանը, այլև Գերմանիային և Ավստրոհունգարիայի կառավարություններին:

Հայերի կողմում Ռուսաստանի հանդես գալը հանդիպեց Գերմանիայի վճռական հակապոլիտիկական, և վերջինս ամեն ինչ արեց, որպեսզի ռուսական նախագիծը ցրվի գործնական նշանակությունից: Եվ, չնայած ռուսական դիվանագիտության բոլոր ջանքերին, Գերմանացիների առաջադրած խնդիրը պահպանելու իրականացվեց. ռուսական նախագիծը արմատական փոփոխությունների ենթարկվեց: Եթե նախնական նախագիծը նախատեսվում էր որ Հայաստանը կապնու է մեկ, ամբողջական մարդ, ապա վերջին խմբագրությունում այն արդեն բաժանված էր երկու մարդի՝ Հյուսիսայինի (Երզրում, Սվապ, Տրապիզոն) կամարմի՝ Հյուսիսայինի (Երզրում, Սիվապ, Տրապիզոն) և հարավայինի (Վան, Բիթլիս, Խարբերդ, Դիարբեքիր): Լաւն լիպորություններով օժտված մեկ քրիստոնյա գեներալ-նահանգապետի փոխարեն, որը ինչպես նախատեսվում էր առաջ, նշանակվելու էր տերությունների կողմից, ի հայտ եկան երկու գեներալ-տեսուչներ, որոնք նշանակվելու էին Բ. Դռան կողմից, և նրանցից յուրաքանչյուրին առնթր տերությունների կողմից նշանակվող եվրոպացի խորհրդական: Ռուսաստանին, սակայն հաջողվեց պնդել, որ գեներալ տեսուչների և խորհրդականների միջև կոնֆլիկտներ առաջանալու դեպքում վճռական ձայնը պատկանում է վերջիններին:

Այս բոլոր փոփոխությունները, որոնք պայտորեն վատացրել էին բարենորոգումների նախագիծը, նրա մեջ էին մտցվել Գերմանիայի պնդմամբ: Ռուսական դիվանագիտությունը, որը փայտայում էր տվյալ հարցում տերությունների համատեղ հանդես գալու գաղափարը, ընդունեց այդ փոփոխությունները: Սակայն բարենորոգումների այդ կիսատ-պոատ նախագծի իրականացումն էլ էր ամեն կերպ արգելակվում Գերմանիայի կողմից: Կոստանդնուպոլսում Գերմանիայի դեսպան Վանգենհայմը այդ հարցում արտաքուտ մասնակցում էր մյուս տերությունների դեսպանների ձեռնարկումներին, բայց նրա գործողությունները միշտ չէ, որ պուզակցվում էին Բեռլինի կողմից թելադրվող կուպիային քայլերի հետ:

Ինչո՞վ է բազատրվում գերմանացիների հակապոլիտիկական բարենորոգումների նախագծի իրականացմանը:

Այն ժամանակ ամբողջ Կիլիկիան, որով անցնում էր Բաղ-

դադի երկաթուղին, որը փաստորեն պատկանում էր գերմանացիներին, գտնվում էր գերմանական շահերի ոլորտում:

Գերմանացիների համար դա քիչ էր, և նրանք սկսեցին իրենց անհագ հայացքը հառել Մեծ Հայքին: Նրանք պնդում էին, որ հետագայում իրենց կոնցեսիաներ տրամադրվեն, ցանկանալով նոր երկաթուղիներ կառուցել, որոնք միացնեն Անկարան, Կայսերին, Սվապը, Խարբերդը, Դիարբեքիրը, Մոսուլը: Քաղաքական լեզվով դա նշանակում էր Մեծ Հայքից անջատել նրա ամբողջ արևմտյան կեսը և անջատված մասը միացնել Գերմանական ապոլիտիկական ոլորտին:

Սակայն, չնայած գերմանացիների հակապոլիտիկական, Թուրքիան այդուհանդերձ ստիպված էր ընդունել բարենորոգումների նախագիծը: Երկու գեներալ տեսուչները՝ բելգիացի և շվեդ, մեկնեցին իրենց նստավայրերը: Բայց շուտով սկսվեց առաջին համաշխարհային պատերազմը, և թուրքերը հայերին հայտարարեցին, թե բարենորոգումների իրագործումը հարկ կլինի հետաձգել: Մի որոշ ժամանակ անց Թուրքիան՝ որպես Գերմանիայի վասալ, պաշարավի մեջ մտավ նրա կողմում: Հայերի վիճակը դարձավ սարսափելի: Նրանք այժմ հայտնըվեցին առանց որևէ պաշտպանության, թուրքերի և գերմանացիների իշխանության ներքո:

Գերմանացիների կողմից խրախուսվող թուրքերը այն պատրվակով, թե հայերը կարող են օժանդակել ռուսական գործերին, որոշեցին վերջնականապես բնաջնջել նրանց, ոչնչացնել որպես ազգ: Հայերի նախնին ջարդերից ոչ մեկը, չբացառելով նաև այն, ինչին հայերը ենթարկվել էին 1894-1896 թվականներին, չի կարող համեմատվել այն բանի հետ, ինչ նրանց գլխին տեղաց առաջին աշխարհամարտի տարիներին:

Թուրքահայաստանի ողջ բնակչությունը, որը մինչև պատերազմը կապում էր մոտ երկուսուկես միլիոն, անողոք, սիստեմատիկ բնաջնջման ենթարկվեց: նրա նշանակալից մասը, գերապանցապես տղամարդիկ, պարպապես կոտորվեցին, ընդ որում փամփուշտները խնայելու համար, որոնցից այն ժամանակ քիչ ունեին թուրքերը, մարդկանց փակում էին շինություններում և հրկիպում: Մյուս մասը, գերապանցապես երեխաները և աղջիկները, բռնությամբ իլամացվեց: Վերջապես երրորդ մասը սկսեց արտաքսվել Միջագետքի և Սիրիայի ամենահեռավոր վայրերը: Տեղահանությունը կատարվում էր այն հաշվով, որ ձանապարհին հնարավորին չափ շատ ժողովուրդ կոտորվեր սովից, ծարավից ու վրկանքներից: Հայերից խլում էին կոշիկը, հագուստը, փողը, նրանց ուտելիք չէին տալիս:

Բնական է, որ Էրպրումից, Սվապից, Խարբերդից դեպի Հալեպ և Մոսուլ լեռներով անցնող ճանապարհը վերածվեց իսկական «մահվան ճանապարհի»: Հարյուրավոր և հազարավոր հայեր մեկընդմիջտ մնացին Տավրոսի կիրճերում ու լեռնանցքներում:

Հայ բնակչության տեղահանությունն ու շարժը ընդգրկեցին Տրապիզոնի, Սվապի, Էրպրումի, Խարբերդի, Բիթլիսի, Դիարբեքի, Ադանայի վիլայեթների ամբողջ տարածքը: Չէին խնայում ոչ ոքի՝ ոչ մտավորականությանը, ոչ էլ անգամ բարձրաստիճան հոգևորականությանը: Շարքային հոգևորականները սովորաբար առաջ էլ էին կիսում իրենց հոտի բախտը: Խնայվեցին միայն սակավաթիվ հայեր, որոնք ապրում էին Կոստանդինապոլսում: անհարմար էր համարվում չեզոք տեղությունների դեսպանների աչքի առաջ կոտորած սարքել, իսկ, բացի այդ էլ, ինչպես ասում էին, ռավմական մինիստր Էնվեր փաշան իր վրա էր վերցնում անհրաժեշտության դեպքում Կոստանդինապոլիսը մաքրելու եպրափակիչ ձեռնարկումը՝ հեռանալ, ջրիկացնելով դուռը, այսինքն պարպարես շարժելով բոլոր հայերին:

Այսպես կատարվեց Թուրքիայի հայ բնակչության նրկատմամբ հաշվեհարդարը առաջին համաշխարհային պատերազմի տարիներին: Ջարդերի և հայրենի վայրերից դեպի օտարություն հայերի վշտալի տարաբնակեցման պատկերների մանրամասնությունները, այնպիսիք են, որ մարդկային գիտակցությունը հրաժարվում է դրանք ընկալելուց: Ո՛չ Չինգիս-խանի, ո՛չ Լենկթեմուրի ժամանակներում հայերին չէր վիճարկվել նման բան վերապրել: Դա կարող է համեմատվել միայն երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին հիտլերականների հրեշավոր չարագործությունների հետ: Իդուր չէ, որ հայերի այդ բոլոր արյունոտ շարժերը, կոտորածներն ու աքսորը տեղի էին ունենում գերմանացի սպաների անմիջական մասնակցությամբ:

Դարդանելի մոտ դաշնակիցների կրած անհաջողությունները և կուրորեն ավստրո-գերմանական կոալիցիայի հաղթանակին ապավինելը խելքահան արեցին երիտթուրքերի պարագլուխներին, և նրանք որոշեցին, որ այսուհետև ոչ ոք իրենց դատավորը չի լինի հայկական հարցում:

Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ հայ բնակչության բնաջնջման գործում գերմանացի փնվորական քաղաքական գործիչների ունեցած դերը կրկնակի մոայլ բռնույթ է ընդունում երկրորդ համաշխարհային պատերազմի

իրադարձությունների լույսի ներքո: Սովորաբար ընդունված է գերմանական ավապակաբարո իմպերիալիզմի առաջին փորձը համարել ինտերվենցիան և հանրապետական Բալանիային խեղդելը: Սակայն 1915-1916 թվականներին Հայաստանում տեղի ունեցած իրադարձությունները ցույց են տալիս, որ մարդկանց անգլավաժային բնաջնջման առաջին փորձերը վերաբերում են ավելի վաղ ժամանակների:

Կոտորածը, որին ենթարկվեց հայ ժողովուրդը, նրանից հարյուր հազարավոր կյանքեր խլեց: Շատ հայեր որոշեցին թուրքական տարածքում գտնվող ռուսական պորքերի օգնությամբ ապաստան փնտրել Ռուսաստանում:

Տասնյակ հազարավոր հայ գաղթականներ, որոնց սպանում էին կոտորածը կամ սովամահությունը, իրենց փրկությամբ պարտական են ռուսական պորամասերին, որոնց վրա խնդիր էր դրված օգնել այն հայերին, որոնք ապրում էին Վանա լճի ափերին և չէին ցանկանում այնտեղ մնալ ռուսական պորքերի հեռանալուց հետո: Տղամարդիկ և առողջ կանայք առաջ անցան: Մնացին հիվանդներն ու երեխաները: Փոխադրամիջոցները շատ քիչ էին: Հավաքեցին բոլոր անասունները, ձիերը և բոլոր սայլերը ու դրանց վրա տեղավորեցին տղկարներին ու երեխաներին: Ամեն ինչ չափից ավելի էր բեռնրված: Կապակների խուրջիներից ամենուրեք նայում էին սևամազ, սևաչ գլխիկներ, որոնք ծծում էին իրենց բռունցքները, ծպտում, լաց լինում:

Խորհրդային Հասաստանի պետական ապարատում, կուսակցական կյանքում, ժողովրդական տնտեսության մեջ, գիտության, գրականության և արվեստի ասպարեզում ներկայումս կարելի է հանդիպել աչքի ընկնող դիրք գրավող մարդկանց, որոնց խուրջիներով անց էին կացրել ռուսական սահմանով...

Հետագա ռավմական գործույությունների ընթացքում ռուսական պորքերը առաջ շարժվեցին դեպի Անատոլիայի խորքը, և 1917 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ նրանք գրավել էին հայկական մարզերը՝ Էրպրումը, Վանը, Բիթլիսը և մյուսները: Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափախությունից և պատերազմից Ռուսաստանի դուրս գալուց հետո գերմանացի իմպերիալիստները, օգտագործելով երիտասարդ Խորհրդային հանրապետության դժվարությունները, նրան հարկադրեցին մեծ պոհողությունների դիմել հայկական տարածքների հարցում: 1918 թվականի մարտին Գերմանիայի հետ կղնքված Բրեստ Լիտովսկի պայմանագրի 4-րդ պարագրաֆի հա-

մաձայն Ռուսաստանի Հանրապետությունը պարտավորվում էր անհապաղ մաքրել Արևելյան Անատոլիան, ինչպես նաև Կարսի, Արդահանի և Բաթումի օկրուգներից առանց հապաղման դուրս բերել պորթերը: Իսկ այդ օկրուգների բնակչությանը իրավունք էր տրվում, որ իրենք նոր կարգեր հաստատեն իրան աբտությունների համաձայնությամբ:

Մինչդեռ պայմանագրի կնքումից անմիջապես հետո այդ օկրուգները գրավվեցին թուրքական պորթերի կողմից և ենթարկվեցին ռազմական օկուպացման ռեժիմի ու ահաբեկչության: Այդ պայմաններում Թուրքիան՝ ի խախտումն Բրեստ Լիտովսկի պայմանագրի, նոր կարգեր հաստատելու խնդրում ժողովրդի կամքի ապատ դրսևորման փոխարեն բռնությամբ կազմակերպեց այնպիսի «հանրաքվե», որին մասնակցեց բնակչության սոսկ աննշան մասը: Նկատի առնելով դա և Բրեստ Լիտովսկի պայմանագրի մյուս խախտումները, խորհրդային կառավարությունը 1918 թվականի սեպտեմբերի 20-ի նոտայում նշեց, որ օսմանյան կառավարության գործողությունները փաստորեն չեղյալ են դարձրել Բրեստ Լիտովսկի պայմանագիրը:

Այդպիսով, այդ մարզերին տիրապետելու հիմքում ընկած է թուրքերի կողմից դրանց բռնի կավթումը:

ՀԱՅ-ԹՈՒՐԿԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՌԱՋԻՆ, ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻՑ ՀԵՏՈ

Առաջին համաշխարհային պատերազմի վերջանալուց հետո, երբ Գերմանիան հարկադրված էր ստորագրել անձնատուրության պայմանները, և Թուրքիան էլ արժանացավ նրա բախտին, հաղթող տերությունները նորից պահվեցին հայկական հարցով: Փարիզի 1919 թվականի հաշտության կոնֆերանսի նուրբան առթիվ, իսկ Լյուդ Ջորջը պահանջում էր, որ Թուրքանում հայկական մարզերի նկատմամբ թուրքական գերիշխանության առթիվ, իսկ Լյուդ Ջորջը պահանջում էր, որ Թուրքանայաստանի համար ճանաչվեն գոյության «առանձնահատուկ ազգային պայմաններ»:

Հետպատերազմյան աշխարհի ճակատագիրը տնօրինողները բնավ չէին կասկածում հայերի վաղնջական հողերի նըկատմամբ նրանց պահանջների արդարացիությանը, որն իր արտացոլումը գտավ Սևրի 1920 թվականի պայմանագրում,

որը մի կողմից ստորագրեցին հաղթող տերությունները, և մյուս կողմից՝ Թուրքիան: Պայմանագրի 88-րդ պարագրաֆի համաձայն՝ թուրքիան դաշնակից տերություններից անմիջապես հետո ճանաչում էր Հայաստանը որպես ապատ ու անկախ պետություն: 89-րդ պարագրաֆի համաձայն՝ Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանագծի որոշումը տրամադրվում էր ԱՄՆ-ի պրեզիդենտի միջնորդիչ լուծմանը: Ընդ որում ապահովվում էր Հայաստանի ելքը Սև ծով, իսկ Թուրքիան պարտավորվում էր ապառազմականացնել իր տարածքի այն մասը, որը պետք է սահմանակից լիներ Հայաստանին: 1920 թվականի նոյեմբերի 22-ին Վիլսոնը կայացրեց իր միջնորդիչ որոշումը՝ Հայաստանի սահմանները պետք է անցնեն Վանի, Բիթլիսի, Էրզրումի և Տրապիզոնի վիլայեթներով:

Բայց Սևրի պայմանագրի որոշումները փխրուն եղան, ինչպես Սևրի ձևապակին, դրանք չկենսագործվեցին, ու նախ և առաջ այն պատճառով, որ Անտանտի տերությունները ընդունելով այդ որոշումները, հոգ էին տանում ոչ այնքան հայ ժողովրդի, որքան իրենց իմպերիալիստական շահերի ապահովման մասին:

Մինչ այդ, երբ դեռ շարունակվում էին բանակցությունները հաղթող տերությունների միջև, Քեմալ փաշան կարողացավ զգալի փնված ուժեր հավաքել և ոչ միայն հրաժարվեց մաքրել այն տարածքից, որի մասին ասվում էր Սևրի պայմանագրում, այլև անցավ Ռուսահայաստանի սահմանները: Թուրքական պորթերը առավել հետադեմ թուրք գեներալներից մեկի՝ Քյապիմ Կարաբեքիր փաշայի հրամանատարության ներքո գրեթե առանց դիմադրության մտան Հայաստանի տարածքը, գրավեցին Կարսը, Սուրմալուն, Ալեքսանդրոպոլը: Ներկայումս Լենինական): Անտանտը ոչնչով չօգնեց Հայաստանին: Քյապիմ Կարաբեքիրը դաշնակցական կառավարությանը հարկադրեց անասելի ծանր հաշտություն ստորագրել:

1920 թվականի դեկտեմբերի 2-ին Ալեքսանդրապոլում ըստորագրված հաշտության այդ պայմանագրի համաձայն Հայաստանը փաստորեն անցնում էր Թուրքիայի հովանավորության ներքո: Նա գրկվում էր բանակ պահելու իրավունքից: Դաշնակիցները Թուրքիային էին սիջում Կարսի ու Արդահանի մարզերը և Երևանի նահանգի Սուրմալուի գավառը, թողնելով միայն Երևանի և Էջմիածնի գավառների տարածքները՝ 400 հազար բնակչությամբ: Միաժամանակ Վրաստանի մենջևիկյան կառավարությունը Թուրքիային սիջեց Բաթումի մարզը:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ

...1921 թվականի մարտի 16-ին Մոսկվայում ստորագրված խորհրդա-թուրքական պայմանագիրը հաստատում էր Կարսի և Արդահանի մարզերի, ինչպես նաև Երևանի նահանգի Սուրմալուի գավառի վիջուները Թուրքիային:

...Նման պայմաններում էր սկսում իր գոյությունը Խորհրդային Հայաստանը: Պատմական կարճ ժամանակամիջոցում Հայաստանը աղքատ, հետամնաց ծայրամասից վերածվել է ծաղկուն երկրագործության, վարճացած արդյունաբերության և մեծաթիվ նորակառույցների երկրի: Հայաստանը դարձել է բարձր մշակույթի երկիր. այնտեղ ստեղծված է Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիա, բացվել են տասնյակից ավելի բարձրագույն ուսակադեմիա, բացված են տասնյակից ավելի բարձրագույն ու ուսումնական հաստատություններ, երկիրը պատվել է դպրոցների, թատրոնների և կուլտուր-լուսավորական այլ հիմնարկների խիտ ցանցով:

Խորհրդային Հայաստանին է հառված մեկ միլիոնից ավելի սփյուռքահայերի հայացքը, որոնք ցրված են ամբողջ աշխարհով մեկ: Վերջին ժամանակներս տարբեր երկրներից այստեղ են ձգտում գալ հարյուր հազարավոր հայեր: Հայրենիքը ջերմորեն է դիմավորում իր որդիներին: Վերջերս խորհրդային կառավարության¹ ընդունած դեկրետով պաշտոնապես թույլատրված է սփյուռքահայերի ներգաղթը: Բայց հանրապետության անհանդուրժելի տարածքային նեղվածությունը սահմանափակում է այն: Եվ դա այն ժամանակ, երբ նրանից Թուրքիայի խլած արզավանդ մարզերը՝ Կարսը, Արդահանը և Սուրմալուն ներկայումս սակավաբնակ են:

Արտասահմանում ապրող հայերի շրջանում նկատվող տարերային հայրենաբաղձությունը նոր ուժով է դնում Ռուսաստանի կազմի մեջ մտած հայկական տարածքները Խորհրդային Հայաստանի հետ վերամիավորելու հարցը: Հայ ժողովուրդը բուռն ցանկություն ունի վերադարձնելու իրեն այնքան անհրաժեշտ տարածքները իր պետական դրոշի ներքո: Այդ քայլով կբավարարվեն հայ ժողովրդի սուկ նվապա-

1. ԽՍՀՄ Ժողկոմխորհի որոշումը ընդունվել է 1945 թ. նոյեմբերի 21-ին:

գույն պահանջմունքները: Արտասահմանում ապրող հայերի թիվը մոտավորապես նույնքան է, որքան ներկայումս կա Խորհրդային Հայաստանի տարածքում: Անգամ 1914 թվականի սահմաններով տարածքները Հայաստանին վերադարձնելու դեպքում այն ի վիճակի չի լինի տեղավորելու այն բոլոր հայերին, որոնք ցանկանում են բնակություն հաստատել հայրենի հողի վրա: Ուստի հայերի միտքը անդուլ վերադառնում է իրենց տարածքային ամբողջականության վերականգնմանը՝ 1920 թվականին նրանից խլված տարածքների հետ մեկտեղ նաև Վանի, Բիթլիսի և Էրզրումի մարզերը՝ հայ ժողովրդի այդ վաղընջական հողերը, նրա հինավուրց մշակույթի օրրանի, Խորհրդային Հայաստանի հետ վերամիավորելու միջոցով:

Աշխարհի բոլոր ծայրերից, որտեղ հայ գաղթօջախներ կան, Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի, ԽՍՀՄ Միության կառավարության և Հայկական ԽՍՀ-ի կառավարության անունով, ամենայն հայոց կաթողիկոսի անունով, անընդհատ դիմումներ են ստացվում, որոնցով հույս է հայտնվում, որ Հայաստանի Հանրապետության դրոշի ներքո վերջապես կվերամիավորվեն վաղնջական հայկական հողերը և աշխարհով մեկ սփռված ողջ հայությունը: Այդ պահանջների արդարացիությունը կասկած չի հարուցում: Հայ ժողովուրդը բոլոր իրավունքներն ու հնարավորություններն ունի իր պապենական հողերի հարստություններն օգտագործելու իր վերածնված ազգային պետության բարգավաճման համար:

Գեղ. խմբագիր
Տեխն. խմբագիր՝ Մ. ԹՈՐՈՍՅԱՆ
Վերստուգող սրբագրիչ՝ Ս. Մ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Տորմատ՝ 80×84 1/16: Թուղթ տպագրական 2: Տառատեսակ «Գրքի սովորական»: Տպագրություն բարձր, պայմ. տպագր. մամ., 1,6 պայմ. մերկ. թերթ, հրատ. մամ. 1,27: Տպաքանակ 5000: Պատվեր՝ 801: Գինը՝ 1 ռ.:

«Գիտելիք» հրատարակչություն, Երևան—10, Խ. Արուսյան ճ:

ՀՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի արևտրի գործերի պետական կոմիտեի Աշտարակի «Թրջհրատի» տպարան, Աշտարակ, Ներսես Աշտարակեցու 54: